էլ զարդարուած էր գրօշակներով։ Մալականները աղ ու Հայ մատուցին Վեհափառին և սրտագին օրհնութիւն ընդունեցին։ Այդ տեղ Սիմեոնօվկայում Նորին Ծ. Ութիւնը կանչեց իւր մօտ Նոր Պայազիտու գաւառապետին և նորա օգնականին, շնորհակալութիւն յայտնեց նոցա ճանապարհների կարգապահութեան համար և առաջարկեց նոցա յետ դառնալ իւրեանց տեղերը, յայտնելով թէ չէ մոռանալու նոցա ծառայութիւնը։ 10½ ժամին Վեհափառը սկսաւ իջնել դէպի Դիլիջան՝ այն սքանչելի և գեղեցիկ տեսարան ունեցող ձորովը, որ ճանապարհորդներին զմայլեցնում է, իւր ջրովն ու օդովն, անտառի զանազան ծառերովն ու բոյսերովն և տեսարանովն։

Այսպիսի մի զուարճալի ճանապարհով գնալով և հեռզհետէ դէպի ցած իջնելով հասան Դիլիջան, և Վեհափառ տէրը իջեւանեց Ճարտարապետ Եարալեանցի տանը, ուր Հանգստանալուց յետոյ՝ ընդունեց Տփխիսու Առաջնորդ Արիստակէս եպիսկոպոսին և Աղէքսանդրապօլու յաջորդ Գրիգորիս եպիսկոպոսին, որք ընդ առաջ էին եկել Նորին Սրբութեան։ Բակում պաշտօնագլեստ հագած կանգնած էին տեղական հիւանդանոցի բժիշկ Քալանթարեանցը, անտառապետ Կամսարականը, Ճարտարապետ Սիմէօնեանցը և Ճարտարապետ ճանապարհների հաղորդակցութեանց Եարալեանցը։

Վեհափառը հասնելով այն տեղ՝ օրհնեց հիւրասէր տան տիրոջ և տան տիկնոջ և հիւրերին և երկու ժամին պատուիրեց պատրաստել գնալու։ Այդ տեղ իսկ Վեհափառը շնորհակալութիւն յայտնեց Երեւանից իրան ուղեկցող աստիճանաւոր Քնքուշեանցին և Քալանթարեանցին և արձակեց նոցա։ Եկաւ տեղական փօստ—հեռագրատան կառավարիչ Բագրատէն և յայտնեց թէ կառքերն արդէն պատրաստ են։ Վեհափառը կառք նստաւ և առջեւից ունելով փօստ հեռագրատան աստիճանաւորի կառքը, բազմաթիւ թիկնապահներ և Ղազախ գաւառի բնակչաց խուռն բազմութիւնը՝ ուղեւորուեցաւ դէպի Քարվանսարայ գիշերելու այն տեղ, ուր հասաւ երեկոյեան 5 ժամին։ Քարվանսարայում Վեհափառին ներկայացաւ Ղազախու գաւառապետի օգնական Մխիթարովը։ Վեհափառի համար տեղ էր պատրաստած տեղական հայոց գպրոցում, որ շատ սիրուն զարդարած էր թէ արտաքուստ և թէ ներքուստ։